

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի Էլեկտրոնային եղանակով քվեարկություն

Էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեն՝

✓ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անդամները.

✓ օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անդամները.

Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող աշխատակիցները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անդամները:

Էլեկտրոնային եղանակով քվեարկությունն իրականացվում է՝

- ✓ <https://online.elections.am> էջ այցելելով կամ
- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝ www.elections.am համապատասխան հղման միջոցով:



Գրանցում

Գրանցում



Էլեկտրոնային կայքէջում գլխավորելու համար քվեարկողը պետք է գրանցվի «գրանցում» բաժնում՝ համապատասխան քաղաքում մուտքագրելով տեղանշանի սեփական և համարը, ծրարով իրեն ստանալով լիակատար անհատական ծանկյալներ, իր կրթիքը կամ ավարտված ընտրված օգոյնի անունը և անհատական գաղտնաբառը, գանկության դեպքում՝ նաև էլեկտրոնային փոստի հասցեն համապատասխան հասցեագրագրություններ ստանալու նպատակով:

Քվեարկել

Քվեարկել



Պատկերված կետը քվեարկողը մուտք է գրծում գլխավորելու բաժին, համապատասխան քաղաքում լրացնում գրանցման ժամանակ իր կրթիքը մուտքագրված օգոյնի անունը և անհատական գաղտնաբառը և ստանում էլեկտրոնային քվեարկության փոստի քվեարկելու հնարավորություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի էլեկտրոնային եղանակով քվեարկությունը՝

✓ **սկսվում է 27.03.2020թ-ից՝ Երևանի ժամանակով ժամը 08.00-ից.**

✓ **ավարտվում է 29.03.2020թ.՝ Երևանի ժամանակով ժամը 20.00-ին:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

քայլ 1. Էլեկտրոնային եղանակով քվեարկողը մուտք է գործում ԿԸՀ համացանցային կայքի www.elections.am՝ էլեկտրոնային քվեարկության համապատասխան էջը և գրանցվում:

Գրանցում

Գրանցում



Գրանցումը կատարվում է հետևյալ կերպ.

1. Էլեկտրոնային եղանակով քվեարկողը համապատասխան դաշտերում մուտքագրում է իր Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի սերիան և համարը, որի արդյունքում համակարգը ցուցադրում է հանրաքվեի քվեարկությանը մասնակցող քաղաքացու անուն-ազգանունը.

2. վերջինս՝ մուտքագրում է փակ ծրարով իրեն փոխանցված անհատական ծածկագիրը.

Գրանցում

Քայլ երրորդ՝ մուտքագրեք Ձեր՝ օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը
*** Եզված դաշտերը երկուսն էլ պարտադիր լրացնում**

Անձնագրի սերիա, համար *

Այվազան Ելենա

Ծածկագիր *

Ծածկագիրը փակեր է:

Օգտվողի անուն *
(Username)

Անհատական գաղտնաբառ *
(Password)

Էլեկտրոնային փոստի հասցե

3. համակարգն առաջարկում է էլեկտրոնային եղանակով քվեարկողը ներմուծել իր՝ որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը: Հանրաքվեի քվեարկության յուրաքանչյուր մասնակցող ինքն է որոշում իր՝ որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը:

Ցանկության դեպքում հանրաքվեի էլեկտրոնային եղանակով քվեարկողը կարող է նշել իր էլեկտրոնային փոստի հասցեն: Օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը մուտքագրելուց հետո ապահովվում է համակարգի հասանելիությունը:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է հիշել Ձեր կողմից ստեղծած **օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը**, քանի որ դրանք փոխել կամ վերականգնել հնարավոր չէ, քվեարկության գաղտնիության ապահովման նկատառումներից ելնելով:

Առանց այդ տվյալների Դուք չեք կարողանա մուտք գործել «Քվեարկել» բաժինը և քվեարկել:

քայլ 2. Էլեկտրոնային եղանակով քվեարկողը մուտք է գործում կայքի «Քվեարկել» բաժինը՝ մուտքագրելով օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը:

Մուտք համակարգ

Օգտվողի անունը:
(Username) Voter1

Անհատական գաղտնաբառը:
(Password) *****

Մուտք

քայլ 3. Ցուցադրվում է հանրաքվեի քվեարկության քվեաթերթիկը և մասնակցողը ստանում է քվեարկելու հնարավորություն:

Էլեկտրոնային քվեաբեռքիկ

Քվեարկության մասնակիցը, եթե համաձայն է ընդունել հանրաքվեի դրված հարցը, քվեաբեռքիկում նշում է կատարում «ԱՅՈ» բառի դիմացի դատարկ քառանկյունում, իսկ եթե համաձայն չէ՝ «ՈՉ» բառի դիմացի դատարկ քառանկյունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՔՎԷ

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

05 ապրիլ 2020թ.

Համաձայն չես եք

Հայաստանի Հանրապետության Աստիճանարդության փոփոխությունների նախագծին

Նշումի
համար

Նշումի
համար

ԱՅՈ

ՈՉ

Հաստատել քվեարկությունը

քայլ 4. Էլեկտրոնային եղանակով քվեարկողը, եթե համաձայն է ընդունել հանրաքվեի դրված հարցը նշում է կատարում «ԱՅՈ» բառի, իսկ եթե համաձայն չէ՝ «ՈՉ» բառի դիմացի դատարկ քառանկյունում: Քվեարկությունը կատարելուց հետո հաստատում է քվեարկության արդյունքը:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև էլեկտրոնային քվեարկության սահմանված ժամկետի ավարտը էլեկտրոնային եղանակով քվեարկողը, մուտք գործելով ԿԸՀ համացանցային կայքի՝ էլեկտրոնային քվեարկության համապատասխան էջ, մուտքագրելով իր՝ **որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը**, հնարավորություն ունի փոխելու իր քվեն:

Այդ դեպքում մասնակցի նախկինում քվեարկած քվեաթերթիկը չի ցուցադրվում՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանման նպատակով:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվարկվում է էլեկտրոնային քվեարկությամբ **տրված վերջին քվեն:**

Այն քվեաթերթիկները, որոնք չեն ներառի նշում՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ» բառերից որևէ մեկի դիմացի քառանկյունում, համարվում են անվավեր: Դա հիմք չէ էլեկտրոնային եղանակով քվեարկողի համար ընդգրկվել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների հիմնական ցուցակում, քանի որ համակարգում բացակայում է կապը քվեաթերթիկի և հանրաքվեի քվեարկությանը էլեկտրոնային եղանակով մասնակցող քաղաքացիների ցուցակի միջև:

Էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում քվեարկության ավարտից հետո՝ 2020 թվականի ապրիլի 5-ին, Երևանի ժամանակով ժամը՝ 20:00-ից հետո:

Էլեկտրոնային քվեարկության կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի թիվ 32-Ն որոշմամբ, որին կարող եք ծանոթանալ հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Լրացուցից խորհրդատվություն կարող եք ստանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝

հեռ. +374 (10) 56-32-08

էլ. փոստի հասցե info@elections.am: